

3440
5441

321 P

2-64 W

ԸՆԴ ՄԱՍԼՈՎ

ՆՐԿՈՒ ԴԵՄՔԵՐ

ԽՐԻՍՏԱՆ ՀԱՅՐԻԿ

Ե Ի

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Պատկերազարդ և զեկարուեստական տպարարություն



1915 ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ՍԵՄԻՆ ՎՐԱՅ



Գին 1 Ղրճ Օտար երկիրներու համար 25 անթիլիմ
Շատ ցնոգներու համար մասնաւոր զեղջ կըլլայ
Եզիպտոսի ամէն կողմերէն բախտայի բուլ կընդունուի:

ԲՕՍ Տ ՔԱՐԹ

Ձինանչանը՝ յատուկ քարթ բախտայի ձեւով քար
թօնի վրայ սպուսած հատը 10 փարսայի . Օտար երկիրնի
բու համար 4 հատը 25 անթիլիմ .

Կը ծախուի նաև Ապախլ Համիա Բ-ի պատկեր
քարթ բախտայնի , միևնայն զինով :

Տանկաստանի համար նախապէս քարթ բախտայնի .

ԶԱՐԴԱՐՆԱՆ ԳԻՆ ՏԱՐԻՈՅ

Կ. Պոլիս Չազմագճըրը թիւ 50 Բեկ 2, Գ. Պոլիս Գարու թիւ 695



ԹԻԻ 1

Գին 1 Ղր. Ողջ

“ԿԻՔԵՐԸ ԼՈՒՌ,”

ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԿՈՎԿԱՍԻՆ

ՎԱՂԸ

ԴԷՊ Ի ՉԱՅԱՍՏԱՆ

Ի արեկ կը շնորհաւորենք Նոր Տարին ու երջանիկ եւ ուրախ օրեր
և մաղթենք մեր բոլոր Հնրերցողներուն եւ Հնրերցողուհիներուն :

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

Տպագրութիւն Գաապկան

1915

25299-47;

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ ՍԵՄԻՆ ՎՐԱՅ

Կ'անցնի՜ հինը: Անոր անփառունակ մահուան անհուն թախիծը կը թորի հագիխ մէջ վիրաւոր, և ուխտագրութ ու հեռաւոր հմայքներու, լացող և կարօտահիւժ ձայներու տխուր վերյուշքը կը յառնէ հոն, ու ես կը խորհի՜մ, կը խորհի՜մ ամէն անոնց վրայ՝ որոնք անցան տարիին պէս վշտագին . . . :

Կ'անցնի՜ Տարին: Առանձին եմ սենեկիս մէջ: Մռայլ ու սգատամուկ ամայութիւն մը կը ծանրանայ շուրջս, ու պրկուած մտածումիս ցաւակոծ սեւեռումին մէջէն կը դիտեմ, կը դիտեմ զԱյն՝ յաւիտենական Անիծեալը, որ կ'երթայ՝ որ կը մեռնի:

Կ'երթայ Ան . . . լեռնակուտակ ու անթաղ դիակներու հորիզոնացած զագաթներէն անդին, ո՞վ գիտէ, տիեզերքի անհունութեան՝ ո՞ր անձանօթ ափերը տանիլ պտացներու իւր արիւննազանգ սիրուէթը . . . :

Կ'անցնի՜, կ'երթայ Ան . . . ու իր ոճրախանձ գարշապարներուն ծանրութեան տակ, ռազմադաշտը կը բզրբի կը սորսի, դիակներու բրգաւորումին եղերական հոնդիւնը ողբերգելով . . . համատարած խուլ հծծիւն որ՝ Արգարութեան և Իրաւունքի արիւնաթաթախ դրօշներուն կարմիր խորհուրդը կը շնչէ . . . : Կը լսեմ . . . : Անոր անցքին վրայ, հովուն ծփանուտ և արիւնտորոյր արկները, մեռելներու աշխարհին մահաստուեր ամայութիւններու մէջէն, շիրմական սգաախուր կողկողանքով, ըզկոթափ դանկրաւ, լեռնայնացած անկրութեան . . .



4432-56

սե երգը կ'արձագանգեն, ու վառօդի մահահատ և թու-
նահեղձ ամպը, զԱյն իր թեւերուն մէջ գրկած, հարի-
զոնէն անդին կը հրէ... Անիծեալ տարի' . . . :

Կերթո՞յ Ան . . . սակայն անոր մէջ կտակած, անա-
ւոր եղեանին անդհակամ սարսափը, աւելի կը խորունկ-
նա՞յ, աւելի կը լայննայ մեր շուրջ, և մենք տնարեկ
արհաւիրակածուսի մը մէջ, կը գիտենք հողը . . . արժայրագ-
օրէն կը ըմպէ յորդակո՞նակ աւելը, խորտակուած քիւրա-
ւոր կեանքերու որոնք՝ կը շեղջակուտուին, տղմուտ ճախ-
ճախուտներու գոգին մէջ, կամ խրամտուտուած ճամբա-
ներուն երկայնքը . . . : Անիծեալ՝ Տարի . . . : Ի՞նչ ջախջախ-
ուած երազներ, ի՞նչ բզբաուած իտէպներ, ի՞նչ տա-
ղանդներ ու ընտանեկան ի՞նչ նեցուկներ կը պուկին
քու կառքիդ երկաթէ անիւներուն տակ որ՝ կը թաւա-
լին . . . կը կորսուին արիւնի լճացած ու ճենճերահատ
արահետներէն անդին . . . :

Երթա՞ս բարով, երթա՞ս բարով, անվերադարձ ու
անդարձ . . . :

Մենք՝ անողնադղորդ թնթանօթներու, տիեզերու-
տասան որոտին մէջ, վաղուան յողթանակին հողեղուարձ
ստուգութեամբը գօտեպինդ, Նոր Տարուայ գիտկնակուու
սեմին վրայ կանգնած, Անոր դալուստը կ'ողջունենք . . . :

Գնա՛ դուն, գնա՛ դուն, արիւնի՛ ծով արիւնի ծը-
նունդ, անիծեալ տարի . . . մենք ցնծութեամբ կը դի-
տենք, քու ծոցէդ դուրս ժայթքած ու 1915ի սեմին
առջև ովկիանացած արեան կարմիր հայելին մէջ տա-
կաւ մարող, Լուսինին պառաւ մահիկը որ՝ կը սուզի,
կը խեղդուի . . . կը մեռնի: Գնա՛ դուն, քու ներկայու-
թիւնդ տաղտուկ կ'առթէ մեզ, բայց քու յիշատակդ
միշտ անմեռ պիտի մնայ մեր սրտերուն մէջ. վասն զի
դուն երկնեցիք, արեան Արդարութիւնը, դուն մարմին
տուիր Իրաւունքի Աստուածացումին, քու լանջքերուդ

վրայ գրուեցաւ Մարդկային Աղատագրութեան հոկայ
գազափարին հիմքը: Գնա՛ դուն, մենք չենք լար քեզ
համար, բայց կը յիշենք քեզ . . . գնա՛ դուն, ու թն՛դ
մեզ, թող մեզ, 1915ի փոփարար և յուսատու թեւե-
րուն տակ, հիւսյունքի խանդավառ պոսթիկումով մը,
մեր սղջոյնները զրկել Արդարութեան և Իրաւունքի
Ախտեաններուն, որոնք այսօր անձնուիրական ամենի
թափի մը մէջ վերջնական գրոհը տալու կը պատրաս-
տուին, բազմագլխեան Արծիւին անտոխի բոյնին վրայ,
անոր գոռոզ գանկը փշրելու իրենց ստքերուն տակ . . .
ու անոր աղիքները դուրս թափել . . . : Ողջո՞յն, իրա-
ւունքի այդ զիւցազնակամ մարտիկներուն . . . :

* * *

Սակայն այս բոպէին մեր անձկոտ նայուածքը կը
սեւեռուի աւելի յաճախ, այն կէտին վրայ, ուր մեր
եղբայրներուն զրահապատ կուրծքերը կը պատնէչա-
նան, կը լեռնանան կը ցցուին, սուլններու անտառա-
ցած անաւորութեան տակ շոշոդուն ու սպառնացայտ,
որոնք վազած եկած են հոն, տխտանեան անեղազայ-
լոյթ բաղխումի մը մէջ, վերջնականապէս փշրե-
լու՝ ստրկութեան պիղծ շղթաները, որոնք դարեր
ու դարեր մեր վիզերն են պրկեր ու մեր բազուկները
կաշխանդեր. և մենք այդ Տեսիլքին ծիծղուն ու հողե-
գրաւ հմայքին առջև ծնրագիր՝ մեր հոգիին յատակն
ի վար խորունկցող խռովքի մղձաւանջը մեկդի վանած,
վաղուան յուսացօքը արշալոյսին պսպղումը կը դիտենք,
երանուէտ վստահութեան մը հրճուանքովը թալթը-
լուն . . . ու մեր հոգւոյն երախտագիտական զգացում
ներուն ամբողջ ուժգնութեամբը բաբախուն, «ողջո՞յն
Ձեզ, ողջո՞յն Ձեզ» կը կրկնեմք խանդաղին: Ողջո՞յն
Ձեզ, ո՞վ զիւցածնունդ Հայրդի՛ք, Նոր Տարին Ձեզի՛,

Ձեր սուրերուն յազթանա՛կ... մեր սրտերը Ձեզ գոհեր, մեր հոգիները Ձեզ դուրսպան, .. ու մենք վաղը Ձեզ ընկե՛ր... Ողջ՛սն Ձեզ... ու դէպ ի Ձեզ... այո՛, դէպի Ձեզ... մտացած հեռ, նախանձ, ատելութիւն նաև խէթ հաշտուած մխացած... ու կիրքերը լուս:

“ԿԻՐՔԵՐԸ ԼՈՒՌ,”

Ձայս կը թերադրէ մեզ, օրուան աղեխարշ վեհութիւնը, զայս կ'ստիպէ մեզ մեր պարտականութեան սրբութիւնը, ատոր է որ պիտի ձգտին մեր բոլոր մտածումներն ու իղձերը, անով պիտի առաջնորդուինք Իտէալին փշապատ գողգոթաներէն վեր, անով է որ պիտի յուսանք, պիտի յուսակինք ու յաջողինք:

Կիրքերը լուս... կանգ առէ՛ք, փախուստի և սգորումի սա ճամբաներուն վրայ, դադրեցէ՛ք նախանձի և Ատելութեան անգունգներուն եզրը թափառելէ ու մտիկ ըրէ՛ք... արհաւրակած ու մթին գեանադամբաններէ կուգայ այդ ձայնը մեզ, ուր՝ Թօփճեաններ, Արփիարներ, Ձիթճեաններ ու Վարդօներ կը ննջին, եղբայրասպան դաշոյնի՝ տարաբաղդ գահեր...:

Կիրքերը լուս... հեռուէն, Մտախի կողերէն, Տաւրոսի կիրճերէն ու Արաքսի ափերէն կը հասնի այդ ձայնը... որուն մէջ ցեղին ամբողջ հոգին կը բարախէ ու կուլայ...: Անոր՝ այդ ձայնին, պաղատող ու յուզող կերկերանքին առջև, պէտք է դադրին կուսակցական վէճերն ու կռիւները, պէտք է անջրպետները վերնան ու տեսակէտներու սահմանները խառնուին պահիկ մը, պէտք է իրերամերժ ու հակամարտ խըտ-

րութիւնները վերջ գտնեն նպատակին՝ վեհութեան ու նուիրականութեան առջև և բառերու անամէջ վերացականութիւնները մէկգի դրուին առ այժմ, իջնեն ատելութեան ու ետի մոլեգին կատաղանքովը ուռած կիրքերը, ու Հայուն աննուած կամքը պէտք է մէյ մըն ալ ցցուի, իւր դահիճներուն ու աշխարհի առջև, միահաղոյն, միակամ:

Կիրքերը լուս... թո՛ղ լուսն բոլոր ծառացած ետականութիւնները, ցածնան բոլոր հպարտ ու անբարտաւան գոռողութիւնները, բոլոր գլուխ բարձրացուցած ինքնահաճ ունայնութիւնները, թող ինքնիրեննին գան բոլոր վաւաչառ ու նանրամիտ գոճածութիւնները: Աղքատն ու հարուստը, դիւանագէտն ու մշակը, թող իրարու մօտենան, իրար կառչին, պլլուին, վասն զի մին առանց միւսին չըլլար, մէկը միւսին ամբողջացուցիչ մասը կը կազմէ, մին պիտի խորհի միւսը գարծէ, մին ծրագրէ միւսը կատարէ:

Կիրքերը լուս... թող կսկուզնան բոլոր գութան կամքերը, խոժոռ նայուածքները անուշնան ու քաղցրանան, ծամածուռած դէմքերը ժպտին, պարզուին, թո՛ղ իրարու դէմ՝ օնգմուած բուռնցքները քակուին, ու կճրտուող ախուսները թուշնան ու փրթին...:

Թաղականի, Հոգարարձուի, Եկեղեցոյ և Դպրոցի, Տէրաէրի ու Ժամկոչի խնդիրները թող ծալլուին մէկգի դրուին, վաղը Հայրենիքի ծոցին մէջ, և կամ նոյն խկ հաս՝ արմաւենիներու թալկահեղձ շուքին տակ, շատ ժամանակ պիտի ունենանք այդ կարգի բաներով զրազուելու... թո՛ղ Հայուն քաղաքագիտական հեռատեսութիւնն ու հոտառութիւնը, գէթ այս անգամ՝ յողթանակը տանի իւր կիրքին հանդէպ. եթէ սակայն ատով ալ բան մը չի շահինք, գանէ՛ եղբայրական մութեան, փառայեղ ու հրահրաշ, մի օրինակ կոթու-

դած կ'ըլլանք՝ աշխարհի պռճե... ու մեր պատմութեան մէջ:

Կիրքերը լ՛ու... այս պիտի ըլլայ մեր Ուխտը, նոր Տարւոյ շիմքին վրայ, ու մենք վաղը ձեռք ձեռքի, կողք կողքի ու սիրտ սրտի... խտացած շարքերով պիտի քալենք դէպ ի Հայաստան...:

ԴԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԿՈՎԿԱՍԻՆ

Քեզի՛ է որ կը դառնան մեր արտօսրաթոր աչքերը, քեզմով է որ կ'ողեւորին մեր անձկայրեաց հոգիները, շուրջի սա մեռելական անհողութենէն սահմուկած մեր սրտերը քեզմով միայն կը բարախեն:

Կովկաս, սլացիր արա՛գ... ու քու սլացքիդ հզօրաթափ ահաւորութեանն առջև՝ փշրէ՛ սանդարամէտական բռնակալութեան մը ժանտապիրիկ շղթաները աւարգ:

Սլացիր Կովկաս... երկնակարկառ միկնարհներու մտնիկազարդ գաղաթներէն վար թափելու՝ քու դժուխական վրէժիդ արդար ցատումը, ուրկէ՛ փոխան Մարգարէի աղօթքին, շատ անգամ ցեղիդ մահուան ահագանքը հնչեցաւ, տարածուեցաւ ու սունայ...:

Սլացիր Կովկաս, սլացիր արագ, Արարատի վահաչւք ստորոտներէն մինչև Միջերկրականի գեղաչէն փերը երկարէ՛ քու երկաթէ յաղթական բազուկներդ ու մենք քու հերոսական խոյանքիդ առջև ցնցուած, թերեւս ֆէն ու սիսի հիւժախտովը մեռած մեր հոգիներուն խորքը, ընդվզումի և ըմբոստութեան արնական հուրին բորբոքումը զգանք, ու արրչուանքի խանդա-

վառ գինովութեամբ մը վերացած, վերջին պահուն թերևս, կուտիլ չի գիտցող սա մեր եղբայրական դողդոջուն ձեռները երկարենք քեզ, այրող աւազի անապատներէն քաղուած, ծաղկեայ վախ պսակ մը բուրբերու քու արիական ճակատիդ... կ'ընդունի՞ս...:

Սլացիր Կովկաս...: Քու երագավազ ու մրկավար ձիաւորներդ, իրենց փրփրերախ երիվարներու սալամրակ արշաւին տակ, թող փշրեն՝ ահռելի գտնկը, արեւնադունջ գազանին, որ հինգ դար ամբողջ ցեղիդ արիւնը ծծեց, ու դեռ մահուան փոշրեսի մը նման կը ծանրանայ, մայր-երկրիդ վերաւոր կուրծքին վրայ... փշրէ՛ Կովկաս, ջախջախէ՛ անոր կողերը, ու մի խնայեր բնաւ, մխէ՛ վրիժախանձ դաշտնդ անոր կուրծքին... ափ մը արիւն... ափ մըն ալ մեզի համար կուլ տուր՝ եղբայրական Կովկաս:

Սլացիր Կովկաս... Ազատութեան գեղածածան դրօշը՝ քու յաղթական սուլիներուդ ծայրն անցուցած սուրա՛յ... մի՛ մեղադրեր մեզի, մեր անտարբերութեան և ուրացումին համար. Եգիպտոսի արեւը՝ մեր հոգին է քամեր, մեր արիւնն է ցամքեցուցեր, չորցուցեր... ներէ՛ մեզի դիւցազնական Կովկաս... Արջութեան և խոհեմութեան ախտամուրիկ թեւերուն տակ, մեր մահաթմբիր նիրհը մեզի շատ միտեսներ և ինչո՞ւ, մենք կը գործենք ալ — իրարու դէմ:

Սլացիր Կովկաս... երկար, երկար, սպասեցինք մենք քեզի...:

Ծերուկ մամը՝ իւր ճիւղան գաւկին, փիթոտուած գիակին առջև քեզ յիշեց ու մխիթարուեցաւ, նոր հարսը՝ իւր գիակորոյս ամուսնոյն վրէժը քեզ յանձնեց, վերաւոր Հայդուկը՝ իւր հոգեւարքի վախրումներուն մէջ քեզ ոգեկոչեց, քաջ փեսային՝ իւր կախողանի բարձունքէն քեզ դիտեց ու ժպտեցաւ, թխապարտը՝ իւր

զնսանի մնայլ սեւութեան մէջ քեզ երազեց, Հայ գեղ-
ջուկը աւրուած կալին ու յափշտակուած հօտերուն մօտ՝
քեզ յուսաց, լիութեամբ կոչար՝ իւր պղծումի արհաւիրք-
ներուն մէջէն քեզ կոչեց, ու այսօր՝ հասեր է ժամը՝
փրկութեան և ազատութեան... խոյսցիր կովկաս,
վեհանձնական կովկաս, Պայազիտէն դէպի Վան, Վա-
նէն պէպի՝ Տիգրանակերտ, Կիլիկիա... եթէ ողջեր չի
գտնես քու այդ յաղթական վազքիդ առջև քեզ զօրա-
վիդ ու ընկեր, մեռելներու ուրուականները պիտի գան
քեզ դիմաւորել, ձին թորոններ, Տիգրաններ, Նազա-
րէթ Չովուշներ՝ պիտի արթնան իրենց թարմ գերեզ-
մաններէն, քեզ առաջնորդելու յաղթանակէ յաղթանակ:
Ուրեմն սլացիր կովկաս, սլացի՛ր արագ...:

Վ Ա Ղ Ր

Անոր անաւոր անտուգութեան հոգեխառով մնայլը
կը ծանրանայ մեր շուրջ... մեր տեսութեան առջև՝
ահաբեկ անասնկաղնիներու գծնդակ իրականութիւնը կ'ուր-
ուագծի, կը սեւնայ, և որուն՝ մեր վրայ ազգած յու-
սահատական տականքը, մեր հոգիները կը պրկէ, մեր
սրտերը կը ճնշէ և մեր զգացումները կ'այլասեռէ, կը
սպաննէ: Չ'նք գիտեր ստուգիւ թէ «Վաղը» ի՞նչ վե-
րապահուած է մեզ, միայն՝ սաշափը կրնանք առանց
սխալած ըլլալու ըսել թէ, Վաղը մեր Ազգ. Բարոյական
կեանքին մեջ մեծամեծ փափոխութիւններ տեղի պիտի ունե-
նան: Եւ որպէս զի այդ փոփոխութիւնները, մեր իտէ-
ալներուն մեծութեան ու վսեմութեան համապատաս-

խան ըլլան, պէտք է չընկրկինք ու է զոհոթեան
ու նուիրումի առջև: Ըսի մարդկայնական ճիգերը ա-
մուլ, և ձեռքի ծայրով եղած՝ ողորմութեան նման զո-
հոթութիւնները անպատու մնալու դատապարտուած են:
Գերագոյն ճիգի և գերմարդկային զոհոթեան կարօտ
է Ան... ու մենք ընդունակ պիտ հանդիսանանք ատօր. .
եթէ այ՛, ես առանց վարանելու՝ պիտի ըսեմ թէ, «Վաղը»
մեզի համար խիստ վարդագոյն ու խիստ չքեղ օր մը
պիտի ըլլայ, իսկ եթէ ոչ, Ան մեր լքուած յոյսերուն
և բզքտուած երազներուն եղերաչուք թաղման, հան-
գիսուար օրը...:

Վաղը... մեր հոգիները, ունայն փոռասիրութեան
մը՝ անգոյ և մտացածին խայտանքներովը շղթայուած,
լուստես վստահութեան կամ դժնէ անտարբերութեան
մահարեր թաղութիւնը պէտք է որ ապրին: Վաղը
մենք մեր բոլոր ոյժը, մեր բոլոր եռանդն ու խոյանքը
պիտի գնենք մեր Գործին շուրջ: Անձերու և տխրոտ-
ներու առջև հմայուած, սուսցիկ և սնամէջ խստուած-
ներու այլեւս հուստք չպիտի ընծայինք: Անցեալը
միշտ աչքի տուչե, Ազգովին լաւ պիտի ըմբռնենք բո-
պէին ծանրութիւնն ու յարգը:

Վաղը թերեւս՝ գործեալ կրկնուին մեզի համար
երբեմնի խաղերն ու էնթրիկները: Մեր գերբնական
ճիգերն ու վսեմ նկրտումները անձիտելու: Չլստելու
գիւային և դաւածան ծրագիրներ յօրինուին թերեւս,
վասն զի էնվէր-թալէաթ և Ընկ. Վանկէնհայմ-Սանտէրսի
հովանաւորութեան տակ, սկսած քանդումի գործը կըր-
նայ յանկարծ կտտիլ ու անկատար մնալ, անաւոր վը-
տանդին մօտալուտ գալստեան վախէն գողահար...
կրնան անոնք իրենց փառասիրութեան մոլեգին թափին
մէջ շանթահար վտր իյնալ... ու այն տանն, Ատուած
մի արացի, մեր գործը, իրականէն թէականի կրնայ
վերածուիլ...:

Ո՛հ չէ՛, պէտք չէ իննսն, պէտք չէ կորսուին ու կասին անոնք... մենք, անոնց՝ այդ քանդուածի գործին մէջ պիտի փնտուենք մեր կորսուած փառքերուն ընկորները թանկագին. ու մեր ազատութեան արշալոյսը, Մահիկին չարաչար բզբաւմէն պիտի սպասենք: Այս՝ պէտք է մնան, պէտք է սպրին անոնք, վաղը գուժկանաբեր սե բուեր՝ կողկանձելու համար այն աւերակներուն եզրը, որ իրենք պատրաստեցին: Մենք, նոր Տարիի և Ծնունդի, սա բարեպաշտիկ օրերուն, չպիտի մոռնանք երբե՛ք անոնց կենաց և արեւշատութեան համար աղօթել... վասնփի անոնց մահը, գահավէժ անդունդին կողն ի վար իջնող պետութեան մը դադաղակառքին առջև գամուած, զօրաւոր մէկ յենարանը պիտի ըլլայ, սրով շատ բան պիտի զեղջուի մեր իղձերէն ու յաւակնտութիւններէն:

Չէ՛, թո՛ղ մնան անոնք, մինչև գլուխ շարունակելու համար սկսուած գործը...:

Վա՛ղը... շնական կեղծիքի նոր դարագլուխ մը պիտի բացուի թերեւս դարձեալ և մեր օտմ. փառապանծ? հայրենատիրութիւնը, գովեստ ու զգումների առարկայ պիտի դառնայ, միւս կողմէ սակայն, Նարդի և արիւնի, ըսպանական ու կարմիր ուրուականը պիտի գայ կախուիլ մեր գլխուն վերեւ, դաժան ու սպանացայտ, ուր թուրք հոգիին դժոխային գորչութեան մէջ զսպուած, գաղաճային գայրոյթը դուրս պիտի պոսթկայ... խեղդելու, անէպանելու համար ամէն ինչ որ՝ իրեն անհաճոյ է և անհնազանդ... սակայն Հայուն բազուկը, պարտապ չի պիտի կենայ այլեւս, ան պիտի զորնէ՛ պիտի զորնէ՛ անդադար, մինչև որ, ձեռքի դաշոյնը, ալ յագնի զորնեղէն, ալ յագնայ արիւնէն, մաշուի ու ծոխ... չէ՛ այս անգամ, ան երբեմնի սարուկ ու ոչխարամիտ ուղեւան չէ՛ որ պիտի մորթտուի, պիտի փոզտուի անտրտունջ...:

Վաղը ամէն պատահականութեանց հանդէպ պատրաստ պիտի ըլլանք մենք... չպիտի ձգենք որ մեր արիւնին շարջ նորէն սկսին չէրչիական պազարըլիները, թէև այդ անկարելի է, քանի որ օտմ. պետութիւն չի պիտի մնայ... իսկ եթէ մնայ ալ «հուրի և երկաթի սարսափազդ ուրուականը» շատոնց անցած, ու բիրտ ոյժին ահարկու աստուածացումը ջախջախուած, փըշուած պիտի ըլլայ, և մեր արիւնը ծախելու եղնող այդ փոթիքոս պէյերը չպիտի գտնեն փեշիկէ մը որ աշխարհիս խաղաղութենէն ծանր կըռէ:

Վաղը... Արկօնի տհաւոր գառիթափներուն կողն ի վար, կամ Պըզուրայի ճախճախուտ ափերուն վրայ ու փոթորկաներձ ովկիանոսներու լեռնակուտակ ալքերուն մէջ, անոր գալստեան նախատօնն է որ կը կատարուի այսօր... Ան իրաւունքի արշալոյսը և Արդարութեան աստուածացումը պիտի ըլլայ, ուր թագակիրներ, գոռոզահպարտ ու անբարտաւան թագակիրներ պիտի գան, խոնարհած ու ստորնացած, խունկ ծխելու Գթութեան և Ողորմութեան կուռքերուն... իսկ գարերու անիրտուած հալածականները, իրենց պատուտուած տրէխներու փոշիովը պիտի երթան իրենց արդար դատը պաշտպանել, անվեհեր ու խրոխտ:

Վաղը... հատուցման այն օրն է այդ, անոնք միայն պիտի հատուցուին որոնք զիտցան իրենց դատը պաշտպանել, իրենց իրաւունքը արժեցնել... և մանաւանդ, իրենց զոհաբերութեան բաժինը բերել:

Օ՛հ ուրեմն Հայեր. այսօր արնաբար մեր զէնքերուն պլլուած, քալինք դէպի մարտադաշտը... իսկ վաղը ճակատաբաց, դէ՛պի արդար հատուցում...:

ԴԵՊ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛չ մի ժամանակ այնքան անհրաժեշտ ու հրամայական չէր գարձած այս պահանջը մեզ համար որքան հիմա, ո՛չ մի տանի Անոր անունը այսքան քաղցր, այսքան զգլխիչ ու առկնքնող էր թուած մեզ, և Անոր ձայնը երբէ՛ք այսքան անուշ չէր հնչած մեր սկանջներուն . . . :

Դէպ ի Հայաստան . . . տարիներ ու տարիներ զըսպուած, սղոքիչ ըզձանքներու ու յուսահատօրէն լքուած գեղեցիկ երազներու, շղթայազերծ ամենութիւնն ունի այս բառը իւր մէջ, և որը՝ երկար ու տախտապար տարիներու ընթացքին կերտուած, Ազգ. հսկայ Իտէսալի մը վսեմ՝ Խորհուրդը կը տաճարակրէ, կը մարմնաւորէ իր վրայ :

Դէպ ի Հայաստան . . . վարանումի, անճրկումի և անհոգութեան ազեատլի շրջան մը բոլորելէ յետոյ, մենք կը յուսանք ու կը հուսատանք մանաւանդ թէ, տիեզերական սա՛ անկ ու երկրաստան տուածին հանգէպ, Հայ հոգին թունդ ելած, պիտի մէկգի նետէ տաճարանումի և անտարբերութեան մահաբեր թալկութիւնը իւր վրայէն և հրապարակ գայ տիրական ու ամենի կեցուածքով մը, քալելու համար հոն՝ ուր կը կանչէ զինք իւր պարտականութեան ձայնը . . . : Այդպէս ըրաւ Արարատի միւս կողին վրայ բնակող հայութեան մէկ կէսը, այդպէս ըրաւ Ամերիկահայը իւր հոգեհանգան հետաւոր հանգրուաններուն վրայ, այդպէս պիտի ընէ վաղը Ռումանահայն ու Պուլխարահայը, ու — աչքերը լոյս, մեզի համբերութեան ու հուսատարմութեան յորդորներ կարգացող բոլոր ծանրախոս գիւսանագէտ-

ներուն . . . ու հարուստներուն — այդպէս պիտի ընենք նաև մենք . . . :

Ուրացողները, դասալիքներն ու իրենց կոչումին գաւաճանող վատերը, հեռու մնէ . . . մենք պիտի քալենք, գլուխնիս բարձր, կուրծքերնիս ուռած ու բռունցքնիս սեղմած, անյողողող ու աննկուն . . . ու բռնաւ չպիտի դառնանք ետեւնիս, յետ մնացողները մենէ չին, չենք ձանձնար, չենք սպասեր անոնց . . . :

Դէպի Հայաստան . . . : Արիւնտ է ճամբան, ուրկէ պիտի անցնինք մենք, Անոր հասներու համար . . . սակայն մի՛ վհատիք, Հայուն ձեռներեց ու աննուած ու գլին, թշնամիին ջախջախուած սոկորներէն, հսկայ կամուրջներ պիտի լաստակերտէ, արիւնի այդ ծովուն վրայէն դիւրութեամբ անցնելու համար, դէպի հայրենիք վազող անձնուէրներու հոյակապ փաղանքները . . . :

Դէպի Հայաստան . . . երկրագնդի չորս բոլորը սըփուուած, համայն հայութիւնը, պէտք է մէկ մարդու նման ստքի կենայ. «կօշիկները հագուած ու մախաղները մէջքին» պատրաստ՝ առաջին նշանին մեկնելու համար հոն, ուր՝ կը կանչուի ինք . . . Ու Եգիպտահայը, առաջինը պիտի ըլլայ անշուշտ՝ այդ անտեղիտայի հըրաւէրին պատասխանող, վասնզի իւր աշխարհագրական դիրքը, զայդ կը թելադրէ, զայդ կը պահանջէ իրմէն, և յետոյ Աղեքսանդրիան, շատ աւելի մօտ է Ալէքսանտրէթին քան Օտէսան Պոյազիտին . . . :

Մենք չենք կրնար, չենք ուզեր մանաւանդ հաւատալ թէ՛ Եգիպտահայը պիտի թերանայ իւր պարտականութեանը մէջ, և խուլ ձեւանայ հայրենիքին ձայնին : — Այդ տնկարիկի է, քանի մօտաւոր հայրենիքին տեսլքը կուրսուածի միշտ Միջերկրականի մշուշագօծ հորիզոններէն քայլ մ'անդին : Եգիպտահայը, կրաւորական գիրքէ մէջ, սա՛ գերանդանցապէս եղբրական վայրկեաններուն . . . , ո՛վ կրնայ հուսատալ ատոր, — ո՛չ ոք :

Հայաստանի անուն տալ մեր շուրջին անշարժութեան ու լքումին: — Լրջութիւն, խոհեմութիւն թէ... մեռելութիւն... — Ո՞րը...:

Սակայն, լրջութեան ու խոհեմութեան անունին տակ, այդքան թանձրացած ու խաղց կեցուածք մը, երբէք չի կրնար եզրագծանշուած համբաւը արգարացնել...:

Դէպի Հայաստան, ս՛վ եզրագծանշուած երիտասարդութիւն, դէպի Կիլիկիա... Հայրենիքը իւր արիւնշաղախ աւերակներու մոխիրներէն, վերաւոր գըլախը վեր առած, քեզ կը կանչէ՛: Ճակատագրական անտեղիտալի հրամանն է այդ, սրմէ ոչ մի հո՛յ, պետք է խուսափի, եթէ կ'ուզէ ապրիլ իբրև Հայ. և ապրեցնել իւր ազգը իբրև Ազգ... Վասն զի այդ հրուէ-րին պատասխանելու փութկոտութեան մէջ կը կայանայ մեր գոյութեան գերագոյն հարցին լուծումը...:

Զարթի՛ր, գարթի՛ր, ս՛վ եզրագծանշուած երիտասարդ սերունդ, գարթի՛ր, բաց քնամուխ աչերդ, շուրջդ գիտէ... Արեւը՝ արիւն կը հոսէ, լուսինը՝ արիւն կը յուզէ... ոճրապիղծ գալարուն գիշերներ՝ արիւն կը փոխեն ու քնքոյշ արշալոյսներ արիւն կը բացուին. վերջապէս տիեզերքը արիւն կուլայ, իւր ցառուճի անհուն կատաղանքին մէջ. իսկ դո՛ւն. աւա՛ղ... արիւնի այս բոլոր արհաւիրքներուն մէջէն, քու ետըզ շարժած, ատելութեան մթին բաւիղներուն մէջ կը թափառիս աննպատակ ու անկանոց, առանց շուրջի անցուդարձիք թեթեւ ակնարկ մ'իսկ նետել կարենալու:

Կեցի՛ր հոտ... Հայրենիքը քեզ կը կանչէ՛... ցեղիդ արիւնը քեզ կ'աղերսէ՛, կեցի՛ր հոտ, վար դի՛ր, եղբայրասպան աղեղին կապարձները դաւաճան, զրահաւորուէ՛ հայրենիքիդ պաշտպանութեան զրահներովը գեղեցիկ, ու յառաջ խոյացի՛ր... դէպի Հայաստան...:

Գուտաներէն ու արտասահմանէն մեր պրակները ստանալ փափարոզները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. VOSGUIAN, Rue Attarine, 82
ALEXANDRIE, Egypte
Հասարակից՝ ԼԵՌՈՆ ՍՎԱՃԱՆ

հայ կաթողիկոսական

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեանը Եզրագծանշուած Առաջնորդութեան կանչելու հարցը Գահիրէի օրուան էն հրատապ խնդիրը դարձած ըլլալով եւ նկատի ունենալով որ ամբողջ հայութիւնը շահագրգռուած է այդ ընտրութեան մէջ, անհրաժեշտ համարեցինք վերհրատարակել ամբողջութեամբ և առանց ստորակէտի մը փոփոխութեան Տօքթ. Ն. Տաղաւարեանի « Հայոց Կաթողիկոսութիւնն և Այժմու Կաթողիկոսի Ընտրութիւնն » խորագրով գրքոյկին այն մասը որ կը վերաբերի Օրմանեանի: Այդ գրքոյկը ամփոփումն է Տր. Տաղաւարեանի Գահիրէի Լսարան-Ընթերցատան մէջ 1908 Յուլիս 18ին արտասանած բանախօսութեան: Նկատի ունենալով որ Տր. Տաղաւարեանն այդ կաթողիկոսական ընտրութեան համար Գահիրէէն իբր պատուիրակ զրկուած է, տարակոյս չկայ թէ այն ժամանակուան մեր Ազգային իշխանութիւնները՝ որոնց կէսէն աւելին այսօր ալ գեռ կը մնան ազգային գործերու գլուխը՝ տարակոյս չկայ թէ կ'ըսենք այն ժամանակուայ ազգային իշխանութիւնները կը բաժնէին իրենց պատուիրակին զգացումները Օրմանեանի հանդէպ:

Այդ իրողութիւնը նախ և առաջ ու յետոյ Տր. Ն. Տաղաւարեանի ունեցած դիրքը Հայութեան մէջ, հիմնադիր անդամ Հայոց Բարեգործական Ընդհ. Միութեան և նախկին ատենադպիր նոյն Միութեան Կեդրոնական Վարչութեան, նախկին Օսմանեան Բաղըմանի Մէպուս և քարտուղար Հ. Բ. Ը. Միութեան Կ. Պոլսոյ Մասնաձիւղին եւն. եւն., տարակոյս չունինք թէ այդ երկու ազգային մէջ կշիռ կուտան այս հրատապ կողմերը:



Օրմանեան և իր քարոզներով հայրենասէրի համբաւ հանեց, ու յաջողեցաւ յաջորդ տարին կարնոյ առաջնորդ ընտրուել: Եօթն տարի (1880-87) անդ մնաց, գրեթէ ապարդիւն, ու անգամ մալ իր մասին եղած գանգաւաններուն դէմ արգարանալու համար Կ. Պօլիս գնաց: 1886ին եպիսկոպոսանալու համար էջմիածին այցելելուն ազգեց Մակար կաթողիկոսի վրայ, ու յաջորդ տարին Գէորգեան ձեմարանին Աստուածաբանութեան ուսուցիչ կարգուեցաւ: 1888ին Պօլիս դառնալով Գատրգիւղի և Գարակէօմբիւկի քարոզչութեան կոչուեցաւ:

Աշգրեան Սրբազան 1888ին Պատրիարք ընտրուելով՝ ուղեց իր այնչափ սիրած Արմաշն շէնցնել ու զայն Դպրեվանքի վերածել: Յաջողեցաւ ազգին հաւանութիւնն առնել, և Ունճեան Արիկն այդ ծրագրոյն համակրեցնել: Օրմանեան որ կեանքն այսպիսի վանքերու մէջ անցուցած էր՝ Արմաշու վանահայր նշանակուեցաւ, ուր մնաց 7 տարի. իւր գործունէութիւնն սկոլաստիք և ապարդիւն պիտի ըլլար՝ եթէ իրին օգնական չկարգուէր հմտալիցն Եղիշէ Դուրեան: (տես Մատիս 1907 Յունիս թիւ 31):

1896ի ջարդերուն Ազգն չկարողացաւ Արմաշու ծախսն հոգալ, զի սղբացեալ Արիկ էֆ.ն այդ հաստատութեան մեծ պաշտպանն բանտն էր, ուստի Օրմանեան փոխաւ եկաւ ի Կ. Պօլիս, ու տխրահոգակ Քարթղլիմէսոսի Տեղապահութեան օրով աշխատեցաւ Եզրպոսոսի առաջնորդութեան պարարտ պաշտօնն ձեռք բերել:

Այս առիւններն պատրիարքական թափուր ամբողջ բազմելու եպիսկոպոս կը փնտռուէր, և Տառեան Յա-

րութիւն փաշա Սուլթանի կողմանէ ըստ օրինի ընտրութիւն կատարել տալու կոչուած էր: Եպիսկոպոսաց մէջ աչքի զարնողներն իբրև Իզմիրլեանի համակիր արտաւարուած էին, և Քարթղլիմէսոսի ու նմանեաց ընտրութիւնն Ազգին կողմանէ կարելի չէր, իբրև չէզոք կը մնային Սերաստիոյ ալեգարդ Պետրոս Արք. Եպիսկոպոսն որ իբրև հին խտտախրօն եկեղեցական սիրելի էր ազգին ու յարգելի կառավարութեան, և Օրմանեան՝ որ իբրև վանքերու մէջ մեծցող ոք չէզոք համարուած էր, ուստի և գիւրաւ վարելի:

Տառեան անգամ մը միայն տեսաւ Օրմանեանն և մեծ համակրութիւն չառնեցաւ անոր մասին, և Պետրոս Արք. Եպիսկոպոսի պատրիարքացման կողմն էր աւելի, սակայն Օրմանեան յաջողեցաւ անուղղակի կերպով համոզել տալ փաշան թէ՛ նա (Պետրոս Արք. Եպիսկոպոս) ինքզինքն չկարենալ կառավարելու չափ ձեռ էր, թէ Օրմանեան իր ձեռքն լաւ գործիք մը կ'ըլլայ ու իր հրամաններով կը շարժեր, համազուեցաւ Յարութիւն փաշան ու անոր Պատրիարքացումը յաջողցուց: Օրմանեան պատրիարքական ամբողջ երկրուն մտոցաւ զինքն ընտրող ազգն ու ընտրել տօնող Արթին փաշան, և անմիջապէս Համիտի ձեռքն գործիք եղաւ: Յարութիւն փաշա ընտրութենէն քիչ վերջ զգաց իր սխալն, ու ամեն առիւն որ Օրմանեանի որեւէ մի շահատակութիւնն լսէր՝ կ'ըսէր. «Չարաչար սխալեցայ, անիծեալ ըլլայ այն օրն որ զայն յանձնարարեցի, ես Ազգին դժբաղդութեան պատճառ եղայ, մեղայ Աստուած... և այլն»:

Թուեմք աստ համառօտակի Օրմանեանի պատ-

րիարքական աթոռն բարձրանալէն ի վեր 12 տարուան մէջ իր գործունէութեան արդիւնքներն :

Ա. — Օրհմեան Սահմանադրութեան Բաղեց. — Արդէն Օսմ. կառավարութիւնն բաւական ժամանակէ ի վեր կ'ուզէր Հայոց Սահմանադրական իրաւունքներն խլել և յաջողած էր ինչ ինչ սեղմումներ յառաջ բերել, սակայն պատրիարքներն և Ազգ. Իշխանութեան վարիչներն պահապան էին այդ օրինադրքին և սկզբբամբ ոչինչ կորսուած էր : Բարթողիմէոսի տեղապահութեան օրով կառավարութիւնն Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն մէջ ձգեց, այդ նպատակաւ Յանձնախումբ մը կազմուեցաւ, սակայն գործունէութիւնն առկախ մնաց, և բնականաբար մինչ նորոյն վաւերացումն՝ հինն կը պահէր իր բովանդակ ոյժն : Օրմանեան իր հանդիսաւոր ուխտին օրինական բանաձեւն փոխելով՝ «վերաքննել Սահմանադրութեան» վրայ ըրաւ իր ուխտն, և քանի որ այն մէջտեղ չկար Օրմանեան ինքզինքն արտօնեալ զգաց ուզածին պէս վարուելու :

Օրմանեանի Պատրիարքական գահն բարձրանալէն ի վեր կառավարութիւնն սկսաւ իր ծրագիրն ի գործ դնել, օգտուելով անոր համակերպող թուլութենէն, ու այժմ նոյն իսկ Սահմանադրութիւն բառն ջնջելով՝ Ազգ. Պարբերաբանի Օրհմեան կ'անուանեն զայն Ազգային թերթերն :

Օրմանեանի ընտրուելէն ի վեր երբէք Ազգ. ժողով գումարած չէ. և ատոր հետեւանօք տարիներով կազմալուծեալ ժողովներով վարած է Ազգ. գործերն : Վարչական ժողովներն փոխան 14 անդամոց՝ 5-7 ժովական ունէին միայն և ատոնք ալ Դրան պաշտօն-

եայներ, շքանշանի սիրահար վաճառականներ, և Ազգին աչքէն ինկած մի քանի վարկաբեկ եկեղեցականներ էին՝ ու ատոնք Չի տեղ՝ 9 տարիներ գործեցին. և 1906ին այդ Վարչական ժողովներն՝ վերակազմելու համար փոխան Ընդհ. ժողով գումարելու՝ Օրմանեան Դրան հետ համաձայնութեամբ և մի քանի երեսփոխանաց իբր թէ հաւանութեամբ՝ ընտրեց նմանօրինակ մարդոցմէ Ազգ. այդ գերագոյն երկու ժողովներն, յորս ոչնչութիւններ և ըստ Սահմանադրական օրինաց դեռ բաւական տարիք չունեցող երիտասարդներ ալ կան... բաւէ որ գոքա Դրան և Օրմանեանի համակիրներն են :

Սոյ Վարկաբեկներն ընտրութիւնն կանխաւ Դրան կողմանէ սրբագրուած ցուցակի մը վրայ կատարուեցաւ, իսկ վաւերացումն փոխան Ընդհ. ժողովոյ բովէն անցնելու՝ Պառն ժողովն կատարեց :

Քաղ. և կրօնական ժողովներէ անուանեալ խորհուրդներու (Ուսումն. Տնտես. ևն.) անդամաց թիւերն պակսելուն՝ Օրմանեան իր հլու հպատակ դատարկութիւններով կը լեցնէր թիւն, ու այդպէսով ունեցաւ միշտ ամբողջական թուօք՝ ոչնչութիւններէ բաղկացեալ և իրեն գործիք ու մեղսակից մարդերով խորհուրդներ :

Գաւառաց մէջ Երեսփոխանութիւնն անուանական գոյութիւն ունի, սակայն իրենց որոշումներն շատ անգամ անգործադիր կը մնան, իրենց ընտրած առաջնորդներն իսկ եթէ հաճելի չեն կառավարութեան՝ ընտրութիւնն կը բեկանի. օրինակ Ներսէս եպիսկ. Ասլանեան՝ որ Պուլկարիոյ առաջնորդ ընտրուեցաւ, սակայն Դուռն չհաստատեց. և ընդհակա-

ուակն տխրահուշակ Բարթողիմէոսի ձեռնասուն Արիստակէսն բռնի առաջնորդ ընտրուեցաւ Ամասիոյ, ուր ամէն կարգի շահատակութիւններ, նոյն իսկ առեւանգումներ ընել տուաւ:

Թաղական խորհրդոց ըստ օրինի քուէարկութեամբ կազմութիւնն իսկ վերցած է՝ և Պատրիարքն ինքն, իրեն համակիր տափակութիւններով կը կազմէ առժամանակեայ Թաղ. Խորհուրդներ՝ որք յաւերժական կը մնան:

Ի մի բան Սահմանադրական ընտրութիւն, ժողովըրդային ձայն, քուէ ևն. իսպառ բարձուած են շէնորհիւ Օրմանեանի համակերպող քաղաքականութեան:

Բ. Օրմանեան Ազգ. Բարձրագոյն իրաւունքներ մի ամէ իրայ Գ... — Յառաջ քան Սահմանադրութեան հաստատութիւնն իսկ հայ եկեղեցականք անբռնաբարելի էին և կառավարութիւնն զանոնք դատելու և պատժելու գործն Պատրիարքարանի կը թողուր. այժմ շնորհիւ Օրմանեանի թուլութեան որևէ կրօնաւոր կը ձերբակալուի, կը բանտարկուի. կը դատուի ու կը դատապարտուի կառավարութեան կողմանէ:

Եկեղեցականք առաջի դատարանի առանց երգման կը վկայէին, այժմ անոնցմէ ալ օրինական երգում կը պահանջուի:

Ծննդոց և Մահերու վկայագրերն Թաղ. խորհրդոց կողմանէ կը տրուէր՝ այժմ Մ...-ներն տըրուած է այդ իրաւասութիւններն:

Պատրիարքարանի վկայութիւնք իբր բացարձակ ճշմարտութիւններ ընդունելի էին, այժմ քննութեան ենթակայ են և շատ անգամ առ ոչինչ կը համարուին:

Պատրիարքարանի Թ...-ներն և խնդիրներն ի նկատ կ'առնուէին և կամ գոնէ քաղաքավար պատասխանով մը կը մերժուէին, այժմ ընդհանրապէս պատասխան իսկ չեն տար և բերող բարապանն կը վըռընտեն ու երբեմն ալ կը ձեծեն:

Օրմանեանի օրով քանիցս նոյն իսկ պատրիարքարանն խուզարկուեցաւ ստիկանութեան կողմանէ և նա գրեթէ անտարբեր մնաց:

Գ. Օրմանեան Ազգ. Բարձրագոյն իրաւունքներ. — Ազգին ստիպման վրայ Օրմանեան երկիցս հրաժարման սպառնալեօք ազգին ամենակարեւոր բողոքներն ներկայեց և տուն քաշուեցաւ, ըսելով թէ «մինչեւ այդ խընդիրներն չկարգադրուին չեմ կրնար Պատրիարքարան երթալ». իրաց այս ձգտեալ վիճակն մի քանի ամիս տևեց, սակայն ապա դրամական պարգևներ ընդունելով իր գործին զլուին անցաւ:

Սասնոյ Բ. կատարածի (1903) տեղեկագրերն եկած էին. Սուլթանն 300 ոսկի զրկելով այդ թուլթերն ուզեց, առաւ, և ժողովականներն անոնց ծայրն իսկ չտեսան (տես՝ «Ազգ» Ծարաթ. 1908 մարտ 2 թիւ 49 ի Պոսթոն):

Աղթամարայ պատմական եկեղեցւոյն հրաշակերտ գմբէթն թուրքերն քանդեցին, Վասպուրականէն տեղեկագրեր, բողոքագրեր տեղադրին. բայց Օրմանեան բողոք մ'իսկ չըրաւ, գուցէ վրամի ուժով պապանձեցաւ:

Դ. — Օրմանեան Ազգ. Բարձրագոյն իրաւունքներ և շահագործել Գ... իրենեան պատրիարքութեան օրերէն ի վեր Պատրիարքարանն իրեն յատուկ կառք չունէր, և արդէն պէտք ալ չկար, զի պատ-

րիարքներն Պատրիարքարանի մէջ և կամ անոր մօտերն կը բնակէին, և այցելութեանց համար պատշաճ կառք կը վարձուէր: Օրմանեան չհեռացաւ երբէք իր տունէն ու երթեւեկի համար ամասական 18 սուկոյ ծախս մը բարգեց Պատրիարքարանի սնտուկին վրայ:

Նպաստից յանձնաժողովի սնտուկն Օրմանեան տարիներով առանձինն վարեց, առանց հաշուետուութեան... և երբ նպաստներն վերջ գտան ու սնտուկն դատարկեցաւ Յանձնաժողով մը կազմուեցաւ... Այս սնտուկէն նպաստներ տրուած է շատ անգամ իրեն համակիր վարդապետաց և վարժապետաց:

Իզմիրլեանցի մրցանակներն կը տրուին շատ անգամ իր աշակերտ վարդապետներուն և կամ իրեն խնկարկու տափակութիւններուն:

Ողբացեալ Թափշանճեանի քարոզներու մրցանակըն իրեններուն բաժնեց, իրր թէ անոնց գրուածոց յետ քննութեան: Թափշանճեան զայս զգալով ինքն անձամբ կատարեց գոհուի զէմ գրուածներու մրցանակարաշխումն:

Տարագրելոց Յանձնաժողովն՝ որ կազմուած էր՝ իրենց երկիրն աքսոր զրկուած ազգայնաց գոյքերու ու հաշիւներու պաշտպան կանգնելու համար, իրեն Ատենապետ ունեցաւ Օրմանեանի մի ազգականն՝ որ այդ խեղճերու արեան գին գումարէն 3000 սուկի խորած է, կ'ըսուի:

Օրմանեանի ամենասիրելի աշակերտն Մշոյ առաջնորդութեան ատեն կարօտելոց համար հացազին զրկուած 160 սուկին խրացուց: Առ այս Մուշէն եկած

բողոքներուն վրայ Ազգ. թերթերն իրար անցան, ու քննութիւն պահանջեցին. Օրմանեան նպաստից Յանձնաժողովոյ անուանական անդամներուն իրր թէ վաւերացնել տուաւ այդ հաշիւն. Մշեցիք և թերթերն աւելի յուզուեցան, և խրացեալ գումարի հատուցումն պահանջեցին. Օրմանեան յուսահատ գրաքննութեան զիմեց և արգիլել տուաւ այս խնդրոյ մասին որեւէ բան չգրել:

Դեռ չէ լուսարանուած թէ ի՞նչ եղած է փարիզաբնակ Ա. Իծնէսքուի ի նպաստ Զէյթունի Որբանոցին (1904ին) Օրմանեանի զրկած 14450 Ֆր ի և ապա (1905ին) զրկած 200 սուկոյ գումարներն, քանի որ այդ Որբանոցն առ ի չգոյ է հասոյթի փակուեցաւ, և ո՛վ գիտէ զեռ որչա՞փ այդպիսի գումարներ կան՝ որոնց ինչ ըլլալն գեռ յայտնի չէ (տես Ռազմիկ լրագիր Ծիլիպէի, 12 Մարտ 1908, թիւ 202):

Պատրիարքարանի նախորդ գործակատարի միջնորդութեամբ որեւէ ազգայնի գործ առանց վճարքի չէր կրնար կարգագրուիլ, նոյն իսկ ընտրեալ Առաջնորդաց «Պէրաթ»ներն առանց 10—30 սուկի վճարքի ձեռք չէին անցուէր, և այս ամենն անշուշտ գիտակցութեամբ Օրմանեանի:

Ե. — Օրմանեան կառավարութեան — Զէյթուն Ազգ. Դատարարութեան գործչի մասին. — Ի վաղուց կառավարութիւնն հաշտ աչօք չէր նայիր մեր Ազգ. դատախարակութեան գործոյն փալլուն և յառաջիմական վիճակին, ամենէ աւելի իւր աչքին փուշն էին Միաց. Ընկերութիւնն որ Հայաստանի մէջ վարժարաններ կը պահէր, և Կ. Պոլսոյ կեդրոնականն՝ ուր կը պատրաստուէր զարգացեալ և ազատաշունչ

զգացումներով օժտուած երիտասարդութիւն մը: Օրմանեանի մը պատրիարքութիւնն յարմար դատուեցաւ այդ երկու կարեւոր հաստատութիւններն տապալելու: Կառավարութիւնն՝ Միացեալի եկամուտներն ցամքեցնելէ ետք՝ զայն բնաջինջ ընելու հարուածն տուաւ ի ձեռն Օրմանեանի և դորա հետեւանօք փակուեցան անկէ կախում ունեցող վարձարաններն: Կեդրոնականն որ այնչափ արգելաբեր էր ի սկզբան՝ շնորհիւ իր հմուտ ուսուցչաց, Օրմանեան նետմացուց զայն, իրեն համակիր խեղճ ու ջգային մարդուկներով ու անկեալներով լեցնելով գոյն:

Օրմանեան տափակ ուսուցիչներն յանձնարարեց ու պաշտօնի կոչել տուաւ, ու կարողագոյններն որք գլուխ ծռել չգիտէին հալածեց:

Ձ. — Օրմանեան Ազգ. Մամուլն Կազմութեց ու դոյն էրէն Եւրպայ ըրաւ. — Այն լրագրեր որք զինքն կը ջատագովէին անոնց կը վերապահէր Պատրիարքարանի լուրերու թարմերն, և գրաքննիչութեան դէմ պաշտպանութիւնն անոնց յատուկ էր: Իսկ զինքն ու իր գործերն քննագատելու յանգանդներն ս'չ միայն իր շնորհներէն կը գրկէր, այլ և զոյնս յուզողութիւն անկու համար՝ պէտք եղած հրամաններն կուտար գրաքննութեան. որով կամայ ակամայ Լրագրերն իրեն գործիքներն ըրաւ:

Ի. — Օրմանեան Ազգ. Բարբառութիւնն իր ակն իջ առնելով դոյնս ըրաւ. — Օրմանեան Համալսի օրինակին հետեւելով՝ ամեն իշխանութիւն իր ձեռքն տուաւ, ու այն ամեն ժողովներու ու Խորհուրդներու մէջ ուր ինքն չէր կրնար ըլլալ՝ իր մարդուկներն դրաւ ու անոնց միջոցաւ կը զեկավարէր: Հաստա-

տութիւն մը որ երկար տարիներ իր ոտնձգութեանց դէմ կեցաւ, ու այդ շրջանի մէջ փայլուն վիճակ մը ունեցաւ, Ազգ. Հիւանդանոցն էր. սակայն վերջապէս նա յաջողեցաւ և անդ իր մէկ ստոր ֆին-ն-նի՝ թուրք ոտտիկանութեան մի գործիքն անօրէն դնել տալ . . . որոյ գործուէնութեան օրէն Հիւանդանոցի փայլն չիջաւ, կարգն ու կանոն խանգարեցաւ, եկամուտներն նուազեցան և հակառակ պատասպարելոց թուէն 200 անձեր պակսեցնելուն՝ այսօր անկեալ վիճակ մ'ունի և պարտուց տակ կը հեծէ:

Լ. — Օրմանեան Խորհուրդն Խորհուրդն ու շոյն ինչ շոյն Բեւրբեց. — Օրմանեանի խորհրդով 40.000 գաւառացիներ իրենց բնակավայրերն աքսորուեցան, և առ այս առանց որեւէ պատրաստութեան և իրենց ինչքերն հաւաքելու ու հաշիւներն փակելու ժամանակ տալու. ու այդ եղիկիւններն շատ անգամ մերկ ու բոկտան, անօթի, քալելով և ոտտիկանաց հսկողութեան և անգթութեանց տակ ճանապարհորդեցին, որով և բնականաբար իրենց կէսն երկիր հասան: Ասոնց մէջ կային վերջնականապէս Կ. Պօլիս հաստատուած ընտանիքներ որք որեւէ կապ չունէին այլևս իրենց երբեմնի ծննդավայրին հետ. այս խեղճերուն շահերն պաշտպանելու պաշտօն ունեցող Տարագրելոց Յանձնախումբի տխրահուշակ Ատենապետն՝ որ մի ազգական է Օրմանեանի՝ այս գործէն հարլուտացաւ . . . :

Օրմանեան հաւանականաբար ընել տուած է այդ աքսորն վրէժն լուծելու համար յաւուրս Սուլթան Մահմուտի (1828) Կ. Պօլսոյ հայ կաթողիկէներու Գաղտնիա աքսորման. իր նախնիք այդ աքսորեալներու

մէջ գտնուած են, և իրենց ընտանիքն ինչպէս այլ գաղատիացիներ եղած են միշտ հայու թշնամի...
 Օրմանեանց այս աքսորի գործն իր մեծագործութիւններէ կը համարի և պարծենալով ըսած է շ. Մեղեանին թէ՛ «Սրանք գնացին և ազգի համար 40 հազար զաւակ յարուցին» (տես Մշակ թիւ 121 Յունիս 5, 1908):

Այս դէպքերէ վերջ ալ քանիներ աքսոր դրկուեցան միայն այն պատճառով որ Օրմանեան «Ես այս մարդուն վրայ վստահութիւն չունիմ» կ'ըսէր. յիշատակեմք Մելքոն Կիւրճեանն որ յանդգնած էր երբեմն իր եղբոր մասին քննադատական յօդուած մը գրել: Թուրքերն իսկ գթալով այդ երիտասարդ գրագէտ ուսուցչի ու անոր ընտանեաց՝ ուղեցին միջամտել եւ ազատել, սակայն Օրմանեան աքսորումն պահանջեց, և այժմ նա ընտանեօք Գասթէմունի կը գանուի:

Հարիւրաւոր հայեր առանց հարցաքննութեան և դատարան ելնելու ամիսներով բանտերն մնացին և Օրմանեան այս ապօրինութեանց դէմ չբողոքեց:

Թ. — Օրմանեան լրտեսութեան արշաւէն. — Օրմանեան փոխան ուղղապէս կամ Պատր. գործակատարին միջոցաւ Պալատին ու Դրան հետ բանակցելու և ի հարկին Ազգին աւագանեաց անակցութեան գիտելու լրտեսներու միջնորդութեան գիտեց միշտ, որպէս են Ռօպէր, Սիտակ Ֆէրիտ, Արամ Ատիլ Էֆ.ներն. որով այս ազոտտ անձնաւորութեանց յառաջդիմութեան պատճառ եղաւ ու անոնցմով ինքն ալ փախչեցաւ յաջ շտաբիտի, և այս տխրահռչակ անձանց միջոցաւ պատժել տուաւ իր քաղաքականութեան քննադատներն:

Թ. — Օրմանեան ժողովրդեան կրօնական զբոսումն

պատկեր. — Հայն իբր կրօնական ազգ միշտ երկիւղած եղած է, բայց բնականաբար երբ իր կրօնի պետն զուրկ է այդ զգացումէ չկրնար զայն ներշնչել: Արդարեւ ինչպէս Օրմանեան կրնայ բարեպաշտիկ զգացումներ ներշնչել երբ ինքն չհաւատար, կը քարոզէ սկզբունքներ զորս չգործադրեր. կը պարտադրէ եւ միշտ այլոց հետ քինախնդիր վիճակի մէջ է: Կը պատմեն թէ Համբարձման տօնի մը հանդերձեալ էր պատարագել Ազգ. Հիւանդանոցի մէջ, առաւօտուն կ'իմանայ թէ Պալատն թլիփատութիւն կայ, ուստի այլ եպիսկոպոսի մը կը թողու պատարագելու հոգն ու ինքն կը վազէ Պալատ կ'երթայ, ուր կ'իմանայ թէ Քրիստոնէից այցելութիւնն յառաջիկայ շաբթուան թողուած է. ինքզինքն իր մտերմաց առջեւ արդարացնելու համար ըսեր է թէ՛ «կը կարծէի թէ այդ առթիւ դրամական նուէր պիտի տրուէր շնորհաւորութեան գնացողաց»:

ԺԱ. — Օրմանեան էր Գոյնիւնիցացի ընկերակցութեան անդամ. — Օրմանեանի կանանց հանդէպ ունեցած տկարութիւնն և մասնաւորներու հետ փոխադարձ սոսէպ այցելութիւններն, նամանաւանդ իւսկիււտար ի Չամլըճա իտալացի դերասանուհիներու հետ ըրած հացկերպքն, և այլ նամանորինակ դէպքեր լեզու հանած են բարեպաշտիկ ժողովուրդն, ու կրօնաւորներն մանաւանդ երիտասարդ վարդապետներն երես ելած են ու անպատկառ կը շարունակեն իրենց շահատակութիւններն Կ. Պոլսոյ տաքուկ սալօններուն մէջ, մասնաւոր տիկնանց պաշտպանութեան տպաւրնած են և չեն ուզիր հեռանալ Վոսփօրի գեղածիժաղ պիւրէն՝ հովուելու համար գաւառաց անտէր ժողո-

վարդն, Եւ եղաւ ժամանակ մը որ Պոլսոյ մէջ 10 եւ պիսկոպոսներ ու 15 վարդապետներ կը վիտային եւ Օրմանեան չէր իսկ յանդգնէր զանոնք գաւառ զրկել և յուզողութեան անել, զի կը վախնար որ լսէր անհաճոյ պատասխաններ:

ԺԲ. — Օրմանեան անունեցեալ եկեղեցի-հոռ-Յիւնն պառնէց. — Հայ եկեղեցւոյ մէջ ժողովուրդի հովութեան դերն ամուսնացեալ քահանայից անկ է, անոնք իբր ընտանեաց հայր օրինակ ըլլալու են այլոց. Օրմանեան միշտ կուսակրօններն յառաջ կը քաշէ, ասին արարողութեան մէջ, Թաղում, Մկրտութիւն, Հարսնիք. իսկ քահանայից երկրորդական դեր մը կը տրուի անոնց իրաւունքներն կը խլուին, ուստի և թշուառ կը մնան: Պոլսոյ մէջ ծերունազարդ քահանայներն երկտասարդ վարդապետաց ծառայներն են, և քնականարար անոնք կ'. Պոլսոյ շահաւոր մեծավայրն չին թողուր գաւառներն երթալու համար. և եթէ այսպէս շարունակուի կուսակրօններու թիւն պիտի շատնայ և քահանայիցն նուազի, եւ մօտենայ Հռովմէական Եկեղեցւոյ, որոյ կը ճգնի վերածել կարծես մեր Ազգ. հին եկեղեցին:

ԺԳ. — Օրմանեան պատրիարքական շահ պառնէց. — Հայ պատրիարքունք միշտ պատկառանք կը ներշնչէին առ հասարակ ոչ միայն հայ հասարակութեան այլ և օտարաց վրայ. այդ շուքն իսպառ բարձուած է այժմ:

Կրօնաւորք քաջածանօթ իր ներքին կենաց ոչ կը յարգեն և ոչ կը հնազանդին իրեն, ի վիճակի չէ իսկ ստիպել որեւէ բանի մը համար քահանայ մը կամ վարդապետ մը, գալով եպիսկոպոսաց անոնք բոլոր

րովին ինքնիշխան են ու անոնցմէ քիչ շատ աչքի զարնողներն նոյն իսկ ուզողապէս յարաբերութեան կը մտնեն Դրան ու Պալատին հետ, և Պայրամից առթիւ շնորհաւորութեան կ'երթան Սուլթանին՝ Պատրիարքին նման: Օրմանեան այս ամենուն կը տոկայ:

Օրմանեան թէպէտ ի նպաստ Ազգին շատ քիչ բան կ'ընէ՝ սակայն իրեններուն համար նոյնն չէ. անոնց համար շարունակ պաշտօն, աստիճան, շքանշան կը մուրայ. իր եղբայրն Պալատան բժիշկ եւ Առողջ. Ժողովոյ անդամ անուանել տուած է. Տէր Ներսէսեան Քաղաքապետական Ժողովոյ անդամ, Ռօպէր էֆ.ն՝ սոսկ լրտես մը՝ Հասարակաց շինութեանց նախարարութեան խորհրդական և այլն. անոնց ամենուն աստիճաններ և շքանշաններ առնել տուած է. զինքը դրուատողներուն բան չիմայեր. ու միշտ իր անձնական քարթերով զանոնք կը յանձնարարէ, նոյն իսկ մասնաւորաց համար դատաւորաց կողմնակցութիւնն կը խնդրէ: Պայրամի երեք օրերն առաւօտէն մինչեւ երեկոյ այցելութեանց կը շրջի, մինչեւ իսկ երկրորդական և երրորդական պաշտօնէից որք միայն իրենց այցետոմսերնին կը զրկեն: Առաջ պատրիարքներն միայն Սուլթանին, Մեծ Եպարքոսին և երբեմն ալ Կրօնից նախարարին կ'երթային:

Օրմանեան իր շարունակական այցելութիւններով ու թեթեւութիւ խօսակցութեամբ ձանձրոյթ ազգած է թուրք աւագանիին որք զայն « հայոց Ժեղ-Յի պատրիարքը» կ'անուանեն: Օրմանեան շարունակ քարոզ կը խօսի, Պատարագ կ'ընէ, թողերն կը շրջի, մեծատուններն կը խնկարկէ, օրացոյց կը շինէ, Աստուածաբան ու յօդուածներ կը գրէ, ամէն հիւանդանոց

երթալուն՝ որբերուն 20 օխայ շաքար կը բաժնէ, որբանոցի մը համար 40-50 դրշ. հանգանակող վարժարանաց սանուց կոնդակ կը գրէ, լրագրաց միջոցաւ ժողովուրդէն շնորհաւորական այցելութիւն կը մուրայ, Դրան պահանջից վրայ շնորհակալաց ուղերձներ կը ստորագրեն. . . վերջապէս միշտ շարժուն վիճակի մէջ է, կ'ընէ ամեն ինչ ի բաց առեալ պատրիարքութենէ:

ԺԻ. — Օրմանէան Երեսօղէմայ Մէթոն-Ֆեռն Խոնակոն-Ֆեռն անէցոց. — Արդարեւ Երեսօղէմայ Պատրիարքի ձեռութեան հետեւանօք անդ անտեղութիւններ պատահած էին, եւ անոր հետեւանօք կուսակցութիւններ յառաջ եկած էին. Օրմանեան Սրբազան փոխան այդ կուսակցութեանց մէջ տեղի ունեցած անջրպեան բառնալու եւ օրինազանցութեանց առաջին առնելու իր պարբերաբար զրկած պատուիրակներով եւ գրով ու հեռագրաւ սրտացած հրահանգներով կ'իրքերն գրգռեց եւ կուսակցութիւններն վառեց, ու մինչեւ իսկ օստիկանութեան ուշն հրաւիրեց մասնաւորներու վրայ, եւ այսպէս այդ Միաբանութիւնն յուզմանց մէջ պահեց տարիներով եւ ինքն « բաժանեալ զի տիրեցես » ի սկզբունքով իր իշխանութիւնն անդ տարածած է, առանց կատարեալ կարգ ու կանոն զնելու (տես Մշակ 1908 Յունիս 5, թիւ 121):

ԺԵ. — Օրմանէան Կրօնից Սոյ Կ-Ֆ. -Ֆեռն ԶՎԷ. — Այո՛, երկար աշխատեցաւ սո սոյ, եւ կամ առելի վայ Պատրիարքական աթոռին հետ կցելով՝ իւր անձին վրայ կեդրոնացնել այդ երկու իշխանութիւններն մտալով միշտ ի Կ. Պօլիս. ի մի բան Հայ-Հռոմէականներու պետին նման ըլլալ « Կաթողիկոս-Պատրի-

արք »: Յաջողած էր Դուռն համոզել սո սոյ. ուստի նախ ամեն կարգի դժուարութիւններ յարսոյ Սոյ Կաթողիկոսի ընտրութեան դէմ, սակայն տեսնելով որ Ազգն շատ դժգոհ է իր այս գիրքէն, թողուց իր այս սեւ ծրագիրն. . . ե յետ ընտրութեան Կաթողիկոսի ջանաց այդ աթոռն անշուք պահել. . . հակառակեցաւ Սահակ Բ. Կաթողիկոսի Պօլիս գալուն, ու երբ նա յաջողեցաւ գալ՝ անոր ներկայութիւնն անշուք ընելու ամեն միջոց ի գործ դրու: Նոյն իսկ ի պատիւ Սոյ Կաթողիկոսի՝ բարեիշխտակ Արիկ Էֆ. ի յապարանն տրուած մեծ հացկերոթն իր լրտեսներու միջոցաւ արգիլել տուաւ, ի նպատակ Սոյ Աթոռին եղած հանգանակութիւնն չյաջողցնելու համար ամեն ինչ ըրաւ ու այժմ ամեն միջոց ի գործ կը դնէ աղքատ ու կարօտ պահելու համար այդ աթոռը: Կաթողիկոսական իշխանութեան տակ գտնուած որբանոցներու ու վարժարանաց նպատակներն դադրեցուց, եւ նոյն իսկ Կիլիկիոյ համար զրկուած նպատակներն իրենց տեղն ու նպատակին չէր հասցներ, որպէս փարիզարնակ Ա. Իուանէսքուի ի նպատակ Զէյթունի որբանոցին զրկած 14.450 Փր. ի գումարն եւ այդ քաղաքի ազգապատկան ջերմուկներու օթեւանի շինութեան համար յիշեալին հոդմէ զրկուած 200 ոսկին՝ եւն:

Սոյ Կաթողիկոսարանն փլտտակներու վերածուած է եւ դորա շինութեան անփոթ է Օրմանեան:

ԺԶ. — Օրմանէան ՎԷԸ. Հայրապետի Հայրէկէ՛ հրամանաց դէմ ըմբոստացաւ ու անր ըմբոստեց դէմ Բարեկեց. — Օրմանեան իր մի քանի խեղճուկ ու սղտատ անցեալով վարկաբեկ կրօնաւորներով՝ իր կրօնական ժողով մի քանի Հայրապետական ամուսնալուծումներ ու ո-

բոլորմանը բեկանեց, երիտասարդ այրի քահանայից կրկնամուսնութեան ազատաշունջ կարծիքին դէմ բողոքեց, զիրար պատկոզ երկու այրի քահանայներն կարգալուծ հռչակեց, և սովաւ սնարդեց Հայրապետական իրաւասութիւնն ու կարծիքը:

Կ. Պոլսոյ Աթոռէժ ազատուելով Ընդհ. Հայրապետական իշխանութեան տակ մտնել ուղղոյ թեմերու ըզծից հակառակեցաւ, որպէս Ռուսմանիոյ, Պուլիարիոյ, յանդգնեցաւ մինչեւ իսկ Վեհ. Հայրապետին Եւրոպիոյ արքունիքներն զրկած պատգամաւորութեան Ազգին ներկայացուցիչն ըլլալը հերքել, եւնչ. Ողբացեալ Հայրիկ միշտ ներողամիտ աչօք նայած է այս Հոռով մէջ սնտժ վատիկանեան Ռօտէնին:

ԺԷ. — Օրհմէն հայր շէր. — Զարգերու արիւն արցունքի սզգեցութեան տակ ամեն ոք ըզգածուեցաւ ի Կ. Պոլիս և սա տեւեց ժամանակ մը: Ամեն տուներէ ի նշան սգոյ սեղանի ճոխութիւններն դադրեցան, նոյն իսկ Ամանորի աւանդական պտուղներն վերցան, կանայք իրենց արգուզարգերն թողուցին, թատրոններու և զբոսովայրերու մէջ հայեր չէին տեսնուէր... սակայն Օրմանեան մնաց անտարբեր, շարունակելով իր զուարթ կատակարանութիւններն ու քալամպուրներն, և միշտ ճոխ սեղանի առջեւ... հինգշաբթի երեկոյններն ճաշէ առաջ շրջապատուած իրեն համակրելի արկնանց խմբով օղիի սեղանին շուրջը, և Կ. Պոլսոյ ամեն եկեղեցիներու տօնին այն գիւղն կը պատարագէր, ու ապա կ'ընէր այցելութիւններ, պոստաներ, որպէս Չամլըճա, Պէնտերն, Յուշատէտէ, Քեղդըտ հանէ եւնչ. առանց կարգաւոր պայուսակով հետն տարած արիւն արցունքի բուրոզ

նամակներն որք օգնութիւն, պաշտպանութիւն, հաց և մերկութիւննին ծածկելու ցնցատիներ կը խնդրէին... գուցէ սիրտն իրապէս քարեղէն է: Երբ մայրեր և քոյրեր իրենց բանտարկեալ զուկի կամ եղբօր մասին Օրմանեանի միջամտութեան կը դիմէին և ոտքերն կը փարէին՝ զանոնք յետ մղելով կը պատասխանէր՝ « Ըրածնին թող քաշեն »:

Աւելորդ է երկարել Օրմանեանի շահատակութեանց արդէն երկար շարքն՝ ի չարին գործածելով Ձեր համբերատար ունկնդրութիւնն. այս ամեն ծախս կայն երեւի թէ « հեռուի սուրբն դօրաւոր է » ի սկզբունքով ի Ռուսահայս կը գտնուին եղբի իրեն ջատազոյններ. արդարեւ վերջերս տփղիս գումարեալ կաթ. Նախընտրական Ժողովոյն աւելի քան 50 անդամոց մէջ գտնուեցան երեք անձեր որք յանդգնեցան պաշտպանել Օրմանեանը՝ հակառակ ժողովուկանաց աւագ մեծամասնութեան անոր մասին տ... ծ ջախջախիչ աննպատակ կայութեանց, և առաջարկեցին Օրմանեանն իթէ ոչ թեկնածու՝ Կ... նէ երկրորդ քանտիտա ներկայացնել...:

Վերջապէս ժողովն իր ջախջախիչ մեծամասնութեամբ այն եղրակացութեան յանգեցաւ թէ՛ Օրմանեանն ոչ թէ երկանուն այլ նոյն իսկ քառանուն ցանկէն դուրս կու է: Արդարեւ անարգանք մը պիտի

ըլար Հայ Ազգին և իւր բազմադարգան հեղեղեցոյն որ Հռովմի ծոցն սնած ու մեծցած, վատիկանի զգացումներով տոգորուած մի անձ՝ որ հայու սիրտ ու զգացում չկրի՝ և որոյ պատրիարքութիւնն Հայոցս համար այնչափ աղետալի եղաւ, բարձրանար ի գահ Մեծին Գրիգորի, Ներսէսի, Սահակայ, Շնորհալուոյ, Աշտարակեցոյ և Խրիսեանի... ոչ, թող գոնէ մեր Սուրբ Նախահարց այդ աթոռն որ այնչափ զոհողութեամբ պահուած է՝ չարատաւորի՝, ու անդ բարձրանայ ժամանակի ամենէ մեծ Հոյ Եկեղեցականն, Կ. Պոլսոյ Երկաթէ Նախկին պատրիարքն՝ Ազգանուէրն Իգմիրլեան :



5
Քրիստոս
ԳՐԲԵՐ
5

ԳՐԲԵՐ

2013

« Ազգային գրադարան



NL0038255

« Ազգային գրադարան



NL0038254

